

Ակցիան գործում է 2019թ. հունվարի 8-ից մինչև դեկտեմբերի 27-ը ներառյալ

Ակցիայի շրջանակներում «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) տրամադրում է գրավով ապահովված միկրո, փոքր և միջին բիզնես վարկեր (այսուհետ՝ Վարկ) հետևյալ պայմաններով.

	Ժամկետ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
Վարկի տարեկան պարզ տոկոսադրույք	5 տարի	Սկսած 12%-ից	Սկսած 9%-ից՝ առաջին տարվա համար, որից հետո՝ ԿԲԼՏ* + 6.5%	Սկսած 7%-ից՝ առաջին տարվա համար, որից հետո՝ ԿԲԼՏ + 7.3%
	7 տարի	Սկսած 12.5%-ից՝ առաջին 5 տարիների համար, որից հետո՝ ԿԲԼՏ + 6.75%	Սկսած 9.5%-ից՝ առաջին տարվա համար, որից հետո՝ ԿԲԼՏ + 7%	Սկսած 7.5%-ից՝ առաջին տարվա համար, որից հետո՝ ԿԲԼՏ + 7.8
	15 տարի	Սկսած 13% - ից՝ առաջին 5 տարիների համար, որից հետո՝ ԿԲԼՏ + 6.75%	Սկսած 10%-ից՝ առաջին տարվա համար, որից հետո՝ ԿԲԼՏ + 7.5%	Սկսած 8%-ից՝ առաջին տարվա համար, որից հետո՝ ԿԲԼՏ + 8.3%
Վարկի ժամկետ	Մինչև 180 ամիս			
Վարկային հայտի ուսումնասիրման վճար	0 ՀՀ դրամ			
Վարկի տրամադրման միանվագ վճար	0.5%, նվազագույնը՝ 25,000 ՀՀ դրամ			
Վարկի նպատակը	Հիմնական միջոցների ձեռքբերում, շրջանառու միջոցների համալրում և կրեդիտորական պարտքի մարում			

* **ԿԲԼՏ** - «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Լողացող Տոկոսադրույք: Սահմանվում է Բանկի կողմից տարեկան երկու անգամ՝ հիմք ընդունելով հիմնական ցուցանիշները, իսկ վերջիններիս անհասանելիության դեպքում՝ երկրորդային ցուցանիշները: Փոփոխման դեպքում գործող պայմանագրերի անվանական տոկոսադրույքը փոփոխվում է ոչ շուտ, քան վարկառուին այդ մասին տեղեկացնելուց մեկ ամիս հետո:

Հիմնական ցուցանիշներ. ՀՀ դրամի դեպքում՝ ՀՀ պետական 180-օրյա զեղչատոկոսային պարտատոմսերի եկամտաբերության կորի տոկոսադրույքը, որը հրապարակվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից <https://www.cba.am> ինտերնետային կայքում; ԱՄՆ դոլարի կամ եվրոյի դեպքում՝ համապատասխանաբար "ԱՄՆ դոլար 6-ամսյա ICE LIBOR" և "Եվրո 6-ամսյա ICE LIBOR" բենչմարկները, որոնք հրապարակվում են Intercontinental Exchange (ICE) (Ինտերկոնտինենտալ Էքսչենջ (ICE)) կազմակերպության կողմից <https://www.theice.com> ինտերնետային կայքում:

Երկրորդային ցուցանիշներ. ՀՀ դրամի դեպքում՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքը; ԱՄՆ դոլարի դեպքում՝ ԱՄՆ Ֆեդերալ Ռեզերվ բանկի կողմից սահմանված Federal funds-ի տոկոսադրույքը կամ միջակայքի վերին շեմը; եվրոյի դեպքում՝ Եվրոպական կենտրոնական բանկի Marginal lending facility-ի տոկոսադրույքը:

Ընդ որում՝ հիմնական ցուցանիշների հասանելիության անհնարինության և երկրորդային ցուցանիշների կիրառման դեպքում երկրորդային ցուցանիշների հիման վրա սահմանված ԿԲԼՏ-ներով ֆինանսավորումների անվանական տոկոսադրույքները սահմանվում են այնպես, որ ֆինանսավորման տոկոսադրույքի հաստատուն բաղադրիչի փոփոխության պայմաններում անվանական տոկոսադրույքի մեծությունը մնա անփոփոխ:

Սահմանված ԿԲԼՏ տոկոսադրույքները հրապարակվում են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում <https://conversebank.am/hy/kbht/> հասցեով և հասանելի են Բանկի տարածքում:

Լողացող տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շեմը սահմանվում է +/- 4 տոկոսային կետ:

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
- Viber: +374 95 511211
- Skype: conversebank-callcenter

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) իրականացնում է առևտրի ֆինանսավորում (այսուհետ՝ Ֆինանսավորում կամ Վարկ) հետևյալ պայմաններով:

Հաճախորդ կարող է հանդիսանալ ցանկացած իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ՀՎՀՀ ունեցող անձ, իսկ ազրովարկավորման դեպքում՝ նաև ֆիզիկական անձ (ինչպես նաև ֆիզիկական անձանց խումբ), որը դիմել է Բանկի Վարկային քաղաքականությամբ չարգելված ֆինանսավորում ստանալու նպատակով:

Վարկը տրամադրվում է՝ վարկի գումարը փոխանցելով Հաճախորդի կամ վերջինիս կողմից նշված անձի հաշվին:

Ֆինանսավորման ժամկետայնություն և նպատակ

- երկարաժամկետ ֆինանսավորում՝ հիմնական միջոցների և սարքավորումների ձեռքբերում, վերազինում և վերանորոգում, ընդլայնում և արդիականացում,
- կարճաժամկետ ֆինանսավորում՝ շրջանառու միջոցների համալրում և ընթացիկ ծախսերի ծածկում,
- խառը ֆինանսավորում՝ այդ թվում՝ առանձին ծրագրի ֆինանսավորում :

Կարող են տրամադրվել այլ նպատակայնությամբ կամ լրացուցիչ սահմանափակումներով ֆինանսավորումներ, որոնք չեն հակասում Բանկի կողմից իրականացվող ֆինանսավորման սկզբունքներին, համապատասխանում են ծրագրային վարկերի կամ արտաքին աղբյուրների միջոցների համար սահմանված ֆինանսավորումների պայմաններին:

Ֆինանսավորման գործիքներ

Վարկ

- Վարկը տրամադրվում է միանվագ կամ մասնաբաժիններով:
- Վարկը, որպես կանոն, օգտագործվում է երկարաժամկետ, սակայն տրամադրվում է նաև կարճաժամկետ ներդրումների նպատակով: Վարկի մարումների համար հաշվի է առնվում բիզնեսի ներկա ու ապագա հոսքերը և մարվում է մասնաբաժիններով, հետաձգված ժամկետով կամ միանվագ՝ համաձայն փոխհամաձայնեցված ժամանակացույցի:
- Տոկոսագումարը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ Վարկի փաստացի մնացորդի նկատմամբ և, որպես կանոն, մարվում է ամսական կտրվածքով, սակայն կարող է նախատեսվել մարման այլ՝ ֆինանսավորմանը համարժեք ժամանակացույց:

Վարկային գիծ

- Վարկային գիծը (այսուհետ՝ ՎԳ), որպես կանոն, տրամադրվում է բիզնեսի ընթացիկ գործունեությունը և շրջանառությունը ֆինանսավորելու նպատակով: Այս գործիքը հարմարեցվում է ժամկետների և մարումների առումով բիզնեսի արտադրական/առևտրային շրջապտույտին, այսինքն՝ դրան են համապատասխանում ՎԳ ներքո տրամադրված վարկերը՝ ժամկետային առումով, որոնք մարվում են համապատասխանաբար յուրաքանչյուր շրջապտույտից առաջացող ֆինանսական հոսքերից:
- ՎԳ տրամադրվում է սահմանաչափի տեսքով, որի գործողության ընթացքում Հաճախորդին տրամադրվում են Վարկեր: ՎԳ գործողության ամբողջ ժամանակահատվածում Հաճախորդն իրավունք ունի անսահմանափակ քանակով ստանալ Վարկեր, պայմանով, որ ՎԳ սահմաններում տրամադրված Վարկերի՝ այդ պահի փաստացի մնացորդների գումարը և նոր Վարկի հանրագումարը չի գերազանցի ՎԳ ընդհանուր սահմանաչափը: ՎԳ ներքո տրամադրվող Վարկերի պայմանները և մարման ժամանակացույցը սահմանվում են ՎԳ տրամադրման պահին: ՎԳ ժամկետի ավարտից հետո Վարկեր չեն տրամադրվում, իսկ ՎԳ ներքո տրամադրված Վարկերը մարվում են համաձայն ՎԳ պայմանագրով տրամադրված Վարկերի համար սահմանված ժամանակացույցի, որոնց ավարտը կարող է լինել ավելի երկար ՎԳ վերջնաժամկետից:
- ՎԳ համար սահմանվում են հետևյալ պայմանները՝

ՎԳ ժամկետ	Նախընտրելի՝ 12 ամիս, սակայն մինչև այդ ժամկետի ավարտը՝ ըստ հայտի իրականացվում է Հաճախորդի գործունեության ֆինանսատնտեսական վերլուծություն, որի հիման վրա կատարվում է ժամկետի երկարաձգում կամ նոր սահմանաչափի տրամադրում
Վարկերի ժամկետ	Առավելագույնը 12 ամիս
Տոկոսադրույք	Սահմանվում է տարեկան տոկոսադրույք՝ օգտագործված և չօգտագործված մասերի համար: Տոկոսադրույքները կարող եք գտնել ամփոփագրի «Տարեկան տոկոսադրույքներ» բաժնում:

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Տրամադրում	ՎԳ ներքո յուրաքանչյուր Վարկ տրամադրվում է Հաճախորդի գրավոր կամ «Ինտերնետ-բանկ» ծառայության միջոցով ներկայացված հայտի հիման վրա
Մարումներ	<ul style="list-style-type: none"> Տոկոս՝ տոկոսագումարի հաշվարկը կատարվում է օրական կտրվածքով՝ փաստացի մնացորդի նկատմամբ, և, որպես կանոն, մարվում ամսական կտրվածքով Մայր գումար՝ ՎԳ պայմաններով սահմանված Վարկերի մարման ժամանակացույցի համաձայն

Օվերդրաֆտ

- Օվերդրաֆտը տրամադրվում է Հաճախորդի կարճաժամկետ ֆինանսական ճեղքվածքը ծածկելու նպատակով (օրինակ՝ որոշակի ժամանակահատվածում տարբեր վճարումների գծով պայմանագրային պարտավորությունները նախատեսված ժամկետներում կատարելու համար՝ դեբիտորների և նմանատիպ պարտավորությունների վճարումների ուշացումից անկախ): Նմանատիպ ճեղքվածք հնարավոր է արտադրական/առևտրային շրջապտույտում դրամային ներհոսքերի ուշացման արդյունքում:
- Օվերդրաֆտը տրամադրվում է Հաճախորդի բանկային հաշվին՝ բացասական/կրեդիտային սահմանաչափ սահմանելու միջոցով: Օվերդրաֆտը հնարավորություն է տալիս Հաճախորդին իր բանկային հաշվին միջոցների բացակայության դեպքում, հաշվից դուրս բերել գումարներ առավելագույն համախառն օվերդրաֆտի սահմանաչափի չափով:
- Օվերդրաֆտի համար սահմանվում են հետևյալ պայմանները՝

Ժամկետ	Նախընտրելի՝ 12 ամիս, սակայն մինչև այդ ժամկետի ավարտը՝ ըստ հայտի իրականացվում է Հաճախորդի գործունեության ֆինանսատնտեսական վերլուծություն, որի հիման վրա կատարվում է ժամկետի երկարաձգում կամ նոր սահմանաչափի տրամադրում: Օվերդրաֆտի մարման ժամկետին նախորդող երկու ամիսների ընթացքում իրականացվում է Հաճախորդի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, որի հիման վրա կարող է կատարվել օվերդրաֆտի ժամկետի երկարաձգում կամ դրա ձևափոխում միանվագ վարկի՝ համապատասխան մարման ժամանակացույցով:
Տոկոսադրույք	Սահմանվում է տարեկան տոկոսադրույք՝ օգտագործված և չօգտագործված մասերի համար Տոկոսադրույքները կարող են գտնել ամփոփագրի «Տարեկան տոկոսադրույքներ» բաժնում:
Մարումներ	<ul style="list-style-type: none"> Տոկոս՝ տոկոսագումարի հաշվարկը կատարվում է օրական կտրվածքով՝ փաստացի մնացորդի նկատմամբ, և, որպես կանոն, մարվում ամսական կտրվածքով Մայր գումար՝ ընթացիկ մարումները կատարվում են Հաճախորդի բանկային հաշվին մուտքագրվող գումարների հաշվին: Այսինքն՝ ցանկացած մուտք (անկախ նպատակից) ուղղվում է օվերդրաֆտի մարմանը օրվա վերջում գոյացող համախառն մուտքերի և ելքերի զուտ դրական մնացորդի հաշվին: Օվերդրաֆտը ժամկետի վերջում ենթակա է մարման ամբողջությամբ:

Ֆինանսավորման սահմանաչափ՝ ամփոփագրում նշված գործիքներից, այդ թվում նաև տրամադրված երաշխիքներից, որևէ մեկի կամ դրանց համատեղ օգտագործման համար նախատեսվող հանրագումարի չափով կարող է տրամադրվել ֆինանսավորման սահմանաչափ: Առանձին գործիքների համար կարող է տրամադրվել առանձին սահմանաչափ ընդհանուր ֆինանսավորման սահմանաչափի ներքո:

Վարկատեսակներ

«Բրիջ» Վարկ – փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման վարկատեսակ

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք	Արժույթ / Ժամկետ	1 – 3 ամիս	4 – 6 ամիս	7 – 9 ամիս	10 – 12 ամիս
	ՀՀ դրամ	10%	11%	12%	13%
	ԱՄՆ դոլար	6.5%	7%	7.5%	9%
	Եվրո	5%	5.5%	6%	6.5%
Վարկի առավելագույն ժամկետը՝ ներառյալ երկարաձգումը	մինչև 48 ամիս				
Վարկի ապահովում	Երաշխավորություն և/կամ այլ գրավ				
Վարկային հայտի ուսումնասիրության վճար	10,000 ՀՀ դրամ				
Վարկի տրամադրման միջնորդավճար	<ul style="list-style-type: none"> մինչև 6 ամիս մարման ժամկետով վարկերի համար՝ 0.25% վարկի գումարից 7 ամսից ավել ժամկետայնությամբ վարկերի համար՝ 0.5% վարկի գումարից 				

- Վարկային միջոցները տրամադրվում են վարկառուի նախընտրելի ժամկետով, հիմք ընդունելով աղյուսակում նշված տոկոսադրույքները՝ հնարավորություն ընձեռելով վարկառուին այդ ժամկետում կատարել վարկի մարում՝ համաձայն մարման ժամանակացույցի, հետևյալ կարգով. մայր գումարը վճարվում է վարկի գործողության ժամկետի վերջում, իսկ տոկոսագումարներն ամսական պարբերականությամբ:
- Եթե վարկառուի կողմից նախորդ կետում նշված կարգով մարումները չեն կատարվում կամ կատարվում են մարման ժամանակացույցի խախտումով, ապա վարկի համար սահմանվում են հետևյալ պայմանները. վարկի անուիտետային մարման ժամանակացույց, վարկի տոկոսադրույքը սահմանելով Բանկի կողմից տվյալ ժամկետի համար սահմանված տարեկան նվազագույն տոկոսադրույքի չափով:

«Գյումրի» Վարկ – փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման վարկատեսակ

Վարկը տրամադրվում է ՀՀ Շիրակի մարզում տուրիզմի զարգացման նպատակով հետևյալ ոլորտներում ներգրավված ընկերություններին.

- Տուրիզմ (ճամփորդական ընկերություններ, հյուրանոցային և հյուրատնային բիզնես, անհատական ուղևորափոխադրումներ, ճամփորդություն, այդ թվում՝ բժշկական տուրիզմ, լեռնագնացություն, հեծանվաարշավներ և այլն)
- Առևտուր (հանրային սննդի օբյեկտներ, զվարճանքի և ժամանցի կենտրոններ, հուշանվերների, ազգային արտադրանքի, բրենդային խանութների և այլ ապրանքների առևտուր)

Վարկի վարկառուների շրջանակ

Տարածաշրջանում գործող իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, որոնք.

- Ունեն անշարժ գույք, որոնք չեն օգտագործվում բիզնես նպատակով, և կներկայացնեն բիզնեսի զարգացման ծրագիր
- Ցանկանում են ընդլայնել զբոսաշրջության ոլորտում գործող իրենց բիզնեսը
- Ցանկանում են հիմնել նոր հյուրատներ և հանրային սննդի կետեր, այլ ենթակառուցվածքներ
- ՀՀ տարբեր տարածաշրջաններում ունեն գործող բիզնես և ցանկանում են այն ընդլայնել՝ Շիրակի մարզում մասնաճյուղ/եր/ ստեղծելու միջոցով
- Արտերկրում գործունեություն ծավալող՝ Շիրակի մարզից գործարարներ են, և մտադիր են վերադառնել և իրենց գործունեությունը /վեր/սկսել Շիրակի մարզում

Վարկի նպատակ		ՀՀ Շիրակի մարզում տուրիզմի զարգացում	
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք*	Արժույթ / ժամկետ	60 ամիս	120 ամիս
	ՀՀ դրամ	10.5%	11%
	ԱՄՆ դոլար	8%	8%
	Եվրո	6%	6%
Վարկի առավելագույն գումար		150 մլն ՀՀ դրամ /համարժեք արտարժույթ	
Վարկի առավելագույն ժամկետ՝ ըստ վարկավորման նպատակայնության		Շրջանառու միջոցների համալրում՝ 60 ամիս Հիմնական միջոցների համալրում՝ 120 ամիս	
Վարկի ապահովում		Երաշխավորություն և/կամ այլ գրավ	
Վարկային հայտի ուսումնասիրության վճար		0 ՀՀ դրամ	
Վարկի տրամադրման միջնորդավճար		<ul style="list-style-type: none"> • մինչև 60 ամիս ներառյալ մարման ժամկետով վարկերի համար՝ վարկի գումարի 0.25% • 60 ամսից ավելի ժամկետայնությամբ վարկերի համար՝ վարկի գումարի 0.5% 	

* Վարկի ժամկետի առաջին 24 ամիսների համար՝ հաստատուն, 25-րդ ամսից սկսած՝ լողացող

- Վարկավորման գործընթացի և ծրագրերի իրականացման կայացման փուլում տրամադրվում է անվճար բիզնես խորհրդատվություն
- Նոր ձեռնարկվող (startup) ծրագրերի դեպքում՝ կարող է տրամադրվել մարման արտոնյալ ժամկետ՝ մինչև 24 ամիս, որի ընթացքում ենթակա է մարման միայն տոկոսագումարը

Վարկառուներին առաջարկվում է Բանկի ծառայություններից օգտվելու արտոնյալ պայմաններ.

- ✓ Բանկային հաշիվների բացում և վարում՝ 0 ՀՀ դրամ
- ✓ POS-տերմինալի տեղադրում՝ 0 ՀՀ դրամ՝ սպասարկման առաջին տարվա համար
- ✓ Դրամակազմային սպասարկում՝ գործող սակագների 50%-ով զեխսված սակագնով
- ✓ Բիզնեսի շահառուներին և ղեկավարությանը Premium վճարային քարտերի տրամադրում, ինչպես նաև կորպորատիվ քարտերի տրամադրում՝ 0 ՀՀ դրամ սպասարկման վճարով

Converse Trade - ապրանքների ներմուծման և արտահանման ֆինանսավորում

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք	Արժույթ/Ժամկետ	1 - 3 ամիս	4 - 6 ամիս	7 - 12 ամիս
	ԱՄՆ դոլար	6%	6.5%	7%
	Եվրո	4%	4.5%	5%
Վարկի ժամկետը	1 - 12 ամիս *			
Վարկային դիմումի ուսումնասիրության վճար	0 ՀՀ դրամ			
Վարկի տրամադրման միանվագ վճար	Վարկի գումարի 0.15%՝ մինչև 6 ամիս ժամկետով վարկերի համար Վարկի գումարի 0.3%՝ 7 ամիս և ավել ժամկետով վարկերի համար			

* Վարկի ժամկետը հնարավոր է երկարաձգել առավելագույնը 48 ամիս ժամկետով

Երկարաձգման տոկոսադրույքներն են.

Արժույթ/Ժամկետ	մինչև 12 ամիս	13 - 24 ամիս	25 - 36 ամիս	37 - 48 ամիս
ԱՄՆ դոլար	7%	8%	9%	10%
Եվրո	5%	6%	7%	8%

Վարկը տրամադրվում է տոկոսագումարները ամսական վճարման, իսկ մայր գումարը՝ ժամկետի վերջում վճարման հնարավորության պայմանով, ընդ որում, եթե վարկառուի կողմից թույլ է տրվում մարման ժամակացույցով սահմանված ժամկետների խախտում, ապա Բանկի կողմից տվյալ վարկի համար կարող է սահմանվել մարման այլ ժամանակացույց և/կամ այլ տոկոսադրույք:

«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» /«ՀԱԱԳ»/ ԱՓԲԸ-ի կողմից թողարկված վկայագրի ապահովությամբ նախաարտահանման ֆինանսավորում

Վարկի նպատակը	Արտահանման պայմանագրով նախատեսված ապրանքների /ծառայությունների/ արտադրության համար անհրաժեշտ հումքի, նյութերի ձեռքբերում, ինչպես նաև այլ ծախսերի կատարում:		
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը*	Արժույթ/Ժամկետ	1 - 6 ամիս	7 - 12 ամիս
	ԱՄՆ դոլար	6 - 7%	7 - 8%
	Եվրո	5%	5.5 - 6%
Վարկի ժամկետը	1 - 12 ամիս		
Վարկային դիմումի ուսումնասիրության վճար	0 ՀՀ դրամ		
Վարկի տրամադրման միանվագ վճար	Վարկի գումարի 0.15%՝ մինչև 6 ամիս ժամկետով վարկերի համար Վարկի գումարի 0.3%՝ 7 ամիս և ավել ժամկետով վարկերի համար		
Վարկի ապահովություն	«ՀԱԱԳ» ԱՓԲԸ-ի կողմից թողարկված վկայագրի հիման վրա ապահովագրավճարի հատուցումը ստանալու պահանջի իրավունքը, վարկառու ընկերության նշանակալից մասնակիցների և գործադիր մարմնի ղեկավարի անձնական երաշխավորություն, վարկառու ընկերության բաժնեմասի գրավ:		
Վարկի առավելագույն գումար	«ՀԱԱԳ» ԱՓԲԸ-ի կողմից թողարկված վկայագրով սահմանված ապահովագրական գումար՝ նվազեցրած չհատուցվող գումարը:		
Վարկի մարման եղանակ	Տոկոսագումարները՝ ամսական վճարման, իսկ մայր գումարը՝ ժամկետի վերջում վճարման հնարավորություն		

* Տոկոսադրույքի մեջ ներառված չէ ապահովագրության վճարը, որը կատարվում է Բանկի կողմից և այնուհետև պահանջվում հաճախորդից

«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» /«ՀԱԱԳ»/ ԱՓԲԸ-ի կողմից թողարկված վկայագրի ապահովությամբ արտահանման ֆինանսավորում

Վարկի նպատակը	Արտահանման պայմանագրով նախատեսված ապրանքների /ծառայությունների/ արտադրության համար անհրաժեշտ հումքի, նյութերի ձեռքբերում, ինչպես նաև այլ ծախսերի կատարում:
---------------	--

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը	Արժույթ/Ժամկետ	1 - 3 ամիս	4 - 6 ամիս	7 - 12 ամիս
	ԱՄՆ դոլար	6%	6.5%	7%
	Եվրո	4%	4.5%	5%
Վարկի ժամկետը	1 - 12 ամիս			
Վարկային դիմումի ուսումնասիրության վճար	0 << դրամ			
Վարկի տրամադրման միանվագ վճար	Վարկի գումարի 0.15%՝ մինչև 6 ամիս ժամկետով վարկերի համար Վարկի գումարի 0.3%՝ 7 ամիս և ավել ժամկետով վարկերի համար			
Վարկի ապահովություն	«ՀԱԱԳ» ԱՓԲԸ-ի կողմից թողարկված վկայագրի հիման վրա ապահովագրավճարի հատուցումը ստանալու պահանջի իրավունքը			
Վարկի առավելագույն գումար	«ՀԱԱԳ» ԱՓԲԸ-ի կողմից թողարկված վկայագրով սահմանված ապահովագրական գումար՝ նվազեցրած չհատուցվող գումարը:			
Վարկի մարման եղանակ	Տոկոսագումարները՝ ամսական վճարման, իսկ մայր գումարը՝ ժամկետի վերջում վճարման հնարավորություն			

Միկրո վարկեր

Միկրո վարկի տեսակը	Արագ	Ստանդարտ
Վարկի գումարը (առկա և նոր ֆինանսավորում)	Մինչև 3,000,000 << դրամին համարժեք գումար	3,000,001 - 10,000,000 << դրամին համարժեք գումար
Վարկի ժամկետը	Առավելագույնը 36 ամիս	Առավելագույնը 60 ամիս
Վարկային դիմումի ուսումնասիրության վճար գանձվում է հայրը Բանկ ներկայացնելիս	5,000 << դրամ	
Վարկի տրամադրման վճար	Ներկայացված է «Վարկի տրամադրման վճարներ» բաժնում	

Արագ միկրո վարկերի ապահովվածություն

- Պարտավորությունները մինչև 1,5 մլն << դրամին համարժեք գումարի դեպքում՝ առնվազն 50 տոկոս ձայնի իրավունք ունեցող ընկերության մասնակիցների երաշխավորություն և լրացուցիչ երկու երաշխավորություն²
- Պարտավորությունները 1,5 - 3 մլն << դրամին համարժեք գումարի դեպքում՝ առնվազն կոշտ գրավ (թույլատրվում են նաև ապրանքանյութական պաշարներ, բայց ոչ ավելի, քան գրավի գնահատված իրացվելի արժեքի գումարի 50%-ը) և 50 տոկոս ձայնի իրավունք ունեցող մասնակիցների երաշխավորություն² (բացառությամբ՝ անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց) և/կամ լրացուցիչ երկու երաշխավորություն²

Բանկի գործող Հաճախորդները, որոնք Վարկի դիտարկման պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

- չեն ունեցել դասակարգված պարտավորություններ, և դիտարկվող ժամանակահատվածում Բանկի նկատմամբ չեն ունեցել հանրագումարային 20 օրը գերազանցող ժամկետանց պարտավորություն, և
- առնվազն երեսուն ամիս ունեցել են երկու և ավելի նման վարկ, և
- վարկի գումարներն օգտագործել են նպատակային,

կարող են ստանալ մինչև 3 մլն << դրամին համարժեք գումարի չափով արագ միկրո վարկ հետևյալ ապահովվածությամբ՝ առնվազն 50 տոկոս ձայնի իրավունք ունեցող մասնակիցների երաշխավորություն² և/կամ լրացուցիչ երկու երաշխավորություն²:

²Որպես երաշխավոր կարող է հանդես գալ ֆիզիկական անձ /անձինք/, որը /ովքեր/ պետք է ունենա/ն/ կայուն և հիմնավորված եկամուտ: Երաշխավորը՝

- 2ի կարող միաժամանակ հանդես գալ որպես համավարկառու,
- Վարկի տրամադրման պահին իր անունով պետք է ունենա անշարժ և/կամ շարժական գույք (միկրո արագ կրկնվող վարկերի դեպքում, եթե մարված միկրո արագ վարկի սպասարկման ընթացքում հաճախորդը Բանկում չի դասակարգվել, կամ գումարային չի ունեցել 20 օրից ավելի ուշացումներ, երաշխավորը պետք է ունենա կամ կայուն հիմնավորված եկամուտ, կամ իր անունով անշարժ և/կամ շարժական գույք),
- Վարկի տրամադրման պահին կարող է ունենալ առավելագույնը 3 գործող երաշխավորություն՝ տրամադրված այլ անձանց պարտավորությունների դիմաց,

Երաշխավորը վերջին 12 ամիսների ընթացքում պետք է չունենա 30 և ավելի օր ժամկետանց պարտավորություն, ինչպես նաև վարկի տրամադրման պահին՝ դասակարգված պարտավորություն:

Կախված գույքի տեսակից տվյալ գույքի գրավի պայմանագրի համար կարող է պահանջվել նոտարական վավերացում և/կամ օրենքով սահմանված գրավի իրավունքի գրանցում:

Ստանդարտ միկրո վարկերի ապահովվածություն

- Շարժական և անշարժ գույք, ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած նյութական և ոչ նյութական արժեք
- Հաճախորդի համախառն պարտավորությունները 3 մլն ՀՀ դրամին համարժեք գումարից ավելի լինելու դեպքում, որպես գրավ կարող է հանդիսանալ շարժական և անշարժ գույք:
- Այլ դեպքերում՝ Բանկի որոշմամբ:
Գրավադրված գույքի նկատմամբ Բանկի գրավի իրավունքի գրանցումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և գործարար սովորույթներին համապատասխան:

Փոքր, միջին և խոշոր վարկեր

Վարկի տեսակը	Փոքր	Միջին	Խոշոր
Վարկի ժամկետը	10,000,001- 100,000,000 ՀՀ դրամին համարժեք գումար	100,000,001- 200,000,000 ՀՀ դրամին համարժեք գումար	200,000,001 ՀՀ դրամին համարժեք գումարից ավելի
Ապահովվածություն	Առավելագույնը 60 ամիս		Առավելագույնը 84 ամիս
Վարկային դիմումի ուսումնասիրության վճար գանձվում է հայտը Բանկ ներկայացնելիս	Շարժական և անշարժ գույք, ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած նյութական և ոչ նյութական արժեք, այդ թվում՝ գնահատման ենթակա իրավունք, Գրավադրված գույքի նկատմամբ Բանկի գրավի իրավունքի գրանցումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և գործարար սովորույթներին համապատասխան:		
Վարկի տրամադրման վճար	10,000 ՀՀ դրամ	15,000 ՀՀ դրամ	30,000 ՀՀ դրամ
Վարկի ժամկետը	Ներկայացված է «Վարկի տրամադրման վճարներ» բաժնում		
Այլ պայմաններ	Դրամական հոսքերի վերլուծություն կատարվում է 5 մլն ՀՀ դրամին համարժեք գումարը գերազանցող վարկերի դիտարկման ընթացքում:		

Բիզնես վարկեր ոսկու գրավադրմամբ

Վարկի արժույթը և գումարը	Վարկը տրամադրվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով: Վարկի գումարը տրամադրվում է գրավի գնահատված արժեքի՝ - 100%-ի չափով, եթե վարկի տրամադրման ժամկետը չի գերազանցում 6 ամիսը, - 95%-ի չափով՝ եթե վարկի տրամադրման ժամկետը 6 ամսից ավելի է: Վարկի տրամադրման համար պարտադիր չեն երրորդ անձանց երաշխավորությունները:
Ժամկետը, վարկի և տոկոսների մարման կարգը	Վարկի ժամկետը՝ - անուփոփոխային մարման տարբերակով՝ մինչև 24 ամիս - ժամկետի վերջում մարման տարբերակով՝ մինչև 12 ամիս
Ապահովում	Գրավադրվող ոսկյա իրեր
Բանկ ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը	- Վարկային դիմում՝ Բանկում գործող դիմումի ձևին համապատասխան - Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ - Հանրային ծառայությունների համարանիշ կամ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք - Ընդհանուր ժողովի կամ միակ մասնակցի որոշման արձանագրությունից քաղվածք ֆինանսավորում ստանալու և գրավադրվող գույքի վերաբերյալ (կիրառելիության դեպքում) - Կանոնադրության պատճեն, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անձնագիր կամ անձը հաստատող փաստաթուղթ - Տնօրենի անձը հաստատող փաստաթուղթ - Պետական ռեգիստրի կողմից տրված պետական գրանցման վկայական - ՀՎՀՀ (հարկային կոդ) - այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության

Վարկեր սկսնակ (startup) բիզնեսի համար

Վարկառու	Սկսնակ (start-up) բիզնես
Վարկի արժույթը և գումարը	Վարկը տրամադրվում է ԱՄՆ դոլարով, Եվրոյով Վարկի գումարի առավելագույն չափը՝ 100,000 ԱՄՆ դոլար կամ համարժեք Եվրո:
Ժամկետը, վարկի և տոկոսների մարման կարգը	Վարկի ժամկետը՝ առավելագույնը 5 տարի՝ կախված վարկի նպատակից

<p>Ապահովվածություն</p>	<p>Որպես ապահովվածության միջոց դիտարկվում է Բանկի համար տվյալ պահին ընդունելի համարվող արագ իրացվելի անշարժ գույքի գրավ, ընդ որում վարկի գումարը չի կարող գերազանցել գրավադրվող գույքի իրացվելի արժեքի 50 տոկոսը:</p>
<p>Այլ պայմաններ</p>	<p>Վարկի տրամադրումից երեքից վեց ամիս հետո Բանկի կողմից իրականացվում է վարկային միջոցների օգտագործման նպատակայնության մոնիտորինգ: Կախված մոնիտորինգի արդյունքներից, ինչպես նաև հաշվի առնելով այդ ընթացքում բիզնեսի զարգացման ընթացիկ արդյունքները՝ վարկի արժույթը և տոկոսադրույքը կարող են փոխվել՝ համաձայն Բանկում գործող նմանատիպ բիզնես վարկերի համար մոնիտորինգի իրականացման պահին կիրառելի բիզնես վարկերի պայմանների, ընդ որում՝ տոկոսադրույքը և վարկի արժույթը բիզնես վարկերի պայմաններին համապատասխանեցնելը կարող է իրականացվել միայն վարկի տրամադրումից առնվազն վեց ամիս հետո:</p>
<p>Բանկ ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը</p>	<p>Բանկը Հաճախորդից կարող է պահանջել բիզնես պլան: Մնացած փաստաթղթերը՝ ըստ ամփոփագրի «Վարկերի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի»:</p>

Շրջանառու միջոցների համալրման արագ վարկեր՝ առավելագույնը 20 մլն ՀՀ դրամին համարժեք

<p>Վարկառու</p>	<p>Բանկի առևտրային ֆինանսավորման հաճախորդներ, որոնք հանդիսանում են Բանկի գործող վարկառուներ և վերջին 2 տարիների ընթացքում չեն ունեցել անընդհատ 3 օրից ավելի և գումարային 12 օրից ավելի ժամկետանց պարտավորություններ և չեն դասակարգվել</p>
<p>Ֆինանսավորման գործիքը, արժույթը և գումարը</p>	<p>Վարկ, վարկային գիծ, օվերդրաֆտ Ֆինանսավորումը տրամադրվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով և առավելագույն գումարը: Անուիտետային մարման եղանակով վարկի դեպքում՝ Բանկում մարված մայր գումարի մինչև 80%-ը, Օվերդրաֆտի դեպքում՝ Բանկում մարված մայր գումարի մինչև 40%-ի չափով:</p>
<p>Ժամկետը, վարկի և տոկոսների մարման կարգը</p>	<p>- անուիտետային մարման տարբերակով՝ մինչև 36 ամիս - օվերդրաֆտի դեպքում՝ մինչև 12 ամիս</p>
<p>Ապահովվածություն</p>	<p>Գործող վարկային պարտավորությունների ներքո գրավադրված ապահովվածության միջոցներ</p>
<p>Բանկ ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը</p>	<p>Դիմում հայտ, հարկային տեսչությունից պարտք ու պահանջի մասին տեղեկանք</p>

Ֆինանսավորում/գրավ հարաբերակցություն

Ֆինանսավորում/գրավի իրացվելի արժեք հարաբերակցության առավելագույն չափը սահմանվում է 70%, սակայն կախված գրավադրվող գույքի տեսակից կիրառվում են հետևյալ սահմանափակումները.

- անշարժ գույք - 70% (60%, եթե գրավադրվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ)
- հողատարածք - 50%
- մարդատար ավտոտրանսպորտային միջոց՝
 - 70% (30%, եթե գրավադրվող ավտոտրանսպորտային միջոցը ծառայելու է որպես տաքսի), եթե ավտոմատրանսպորտային միջոցը ունի մինչև 10 տարի /ներառյալ/ վաղեմության ժամկետ,
 - 50% (30%, եթե գրավադրվող ավտոտրանսպորտային միջոցը ծառայելու է որպես տաքսի), եթե ավտոմատրանսպորտային միջոցը ունի 11-ից -15 տարվա վաղեմության ժամկետ,
- սարքավորումներ և հատուկ ոչ մարդատար տրասպորտային միջոց - 50%

Ոսկյա իրերի գրավադրմամբ առևտրային վարկերը տրամադրվում են գրավի գնահատված արժեքի մինչև 100%-ի չափով:

Գրավադրվող գույքի ապահովագրում

Բանկը, որպես գրավ նախատեսված ցանկացած գույքի համար իրավունք ունի պահանջել ապահովագրություն՝ ելնելով ֆինանսավորման նպատակից, գործարքից կամ գրավադրվող գույքի նկարագրից:

Ավտոտրանսպորտային միջոցների գրավադրման դեպքում կիրառվում է ԿԱՍԿՈ ապահովագրություն Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերության կողմից:

Շարժական և անշարժ գույքի ապահովագրման դեպքում այն պետք է ապահովագրվի շուկայական/իրական գնի ողջ արժեքով՝ ֆինանսավորման ամբողջ ժամանակահատվածում, եթե Բանկի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

Տարեկան անվանական տոկոսադրույք

Ուշադրություն					
Նշված տոկոսադրույքները հանդիսանում են ուղեցուցային սահման:					
Փաստացի առաջարկվող տոկոսադրույքները ենթակա են համապատասխանեցման յուրաքանչյուր ֆինանսավորման համար՝ հիմք ընդունելով ֆինանսավորման նպատակը, կառուցվածքը, հաճախորդի նկարագիրը, ֆինանսական ու ռիսկային գնահատականները և այլ չափանիշներ:					
Ֆինանսավորման տեսակ	Արժույթ	Ծրագրային / Սեփական	Մինչև 1 տարի	1 - 3 տարի	3 - 5 տարի
Միկրո Արագ	ՀՀ դրամ	Ծրագրային / Սեփական	20% / 20%	22% / 22% (մինչև 2 տարի)	-
	ԱՄՆ դոլար	Սեփական	17%	19% (մինչև 2 տարի)	-
Ստանդարտ Արագ գրավով ապահովված	ՀՀ դրամ	Ծրագրային / Սեփական	14% / 20%	14% / 21%	14% / 22%
	ԱՄՆ դոլար	Սեփական	14%	14%	15%
Փոքր ֆինանսավորում	ՀՀ դրամ	Ծրագրային / Սեփական	14% / 20%	14% / 21%	14% / 22%
	ԱՄՆ դոլար	Սեփական	13%	13%	14%
Միջին ֆինանսավորում	ՀՀ դրամ	Ծրագրային / Սեփական	16% / 20%	16% / 21%	17% / 22%
	ԱՄՆ դոլար	Սեփական	13%	13%	14%
Եվրոյով ֆինանսավորումների դեպքում անկախ գումարից և աղբյուրից սահմանվում են միևնույն տոկոսադրույքներ			11%	11%	12%

ՀՀ դրամով օվերդրաֆտների պայմաններ

ՀՀ դրամով օվերդրաֆտների տարեկան տոկոսադրույք՝ 20%
 ՀՀ դրամով ծրագրային օվերդրաֆտների տարեկան տոկոսադրույք՝ 14%

Խոշոր ֆինանսավորումների տոկոսադրույքներ

Տոկոսադրույքները որոշվում են հաճախորդի վերլուծության արդյունքում՝ ելնելով ֆինանսական և ռիսկային չափանիշների գնահատման արդյունքներից

Զօգտագործված սահմանաչափի տոկոսադրույք

Զօգտագործված սահմանաչափի նվազագույն ուղեցուցային տոկոսադրույքը սահմանվում է 3.0%:

Սկսնակ բիզնեսներին տրամադրվող վարկերի տարեկան տոկոսադրույքներ

Արժույթ	Տոկոսադրույք
ԱՄՆ դոլար	17%
Եվրո	15%

Վարկի տրամադրման միջնորդավճարներ

Վարկի համարժեք գումար	Ժամկետ	Վարկի տրամադրման միջնորդավճար
Մինչև 3,000,000 ՀՀ դրամ գումարի առանց գրավի ֆինանսավորում	Մինչև 1 տարի	3.0%, նվազագույնը 10,000 ՀՀ դրամ
	1-2 տարի	3.5%, նվազագույնը 10,000 ՀՀ դրամ
	2-3 տարի	-
	3-5 տարի	-

Մինչև 10,000,000 ՀՀ դրամ գրավով	Մինչև 1 տարի	0.5%, նվազագույնը 15,000 ՀՀ դրամ
	1-2 տարի	0.75%, նվազագույնը 15,000 ՀՀ դրամ
	2-3 տարի	1.0%, նվազագույնը 20,000 ՀՀ դրամ
	3-5 տարի	1.5%, նվազագույնը 30,000 ՀՀ դրամ
10,000,001 - 25,000,000 ՀՀ դրամ	Մինչև 1 տարի	0.25%, նվազագույնը 15,000 ՀՀ դրամ
	1-2 տարի	0.5%, նվազագույնը 25,000 ՀՀ դրամ
	2-3 տարի	0.75%, նվազագույնը 40,000 ՀՀ դրամ
	3-5 տարի	1.0%, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ
25,000,001 - 100,000,000 ՀՀ դրամ	Մինչև 1 տարի	0.2%, նվազագույնը 30,000 ՀՀ դրամ
	1-2 տարի	0.3%, նվազագույնը 40,000 ՀՀ դրամ
	2-3 տարի	0.4%, նվազագույնը 50,000 ՀՀ դրամ
	3-5 տարի	0.5%, նվազագույնը 60,000 ՀՀ դրամ
100,000,001 ՀՀ դրամից ավելի	Մինչև 1 տարի	0.15%, նվազագույնը 75,000 ՀՀ դրամ, առավելագույնը 750,000 ՀՀ դրամ
	1-2 տարի	0.25%, նվազագույնը 125,000 ՀՀ դրամ, առավելագույնը 1,250,000 ՀՀ դրամ
	2-3 տարի	0.35%, նվազագույնը 175,000 ՀՀ դրամ, առավելագույնը 1,750,000 ՀՀ դրամ
	3-5 տարի	0.4%, նվազագույնը 200,000 ՀՀ դրամ, առավելագույնը 2,000,000 ՀՀ դրամ

Վարկի վաղաժամկետ մարում

Մինչև վարկի գործողության ժամկետի կեսը (վերավարկավորման դեպքում՝ նոր վարկի տրամադրման օրվանից հաշված) վարկի վաղաժամ մարում կատարելու դեպքում Բանկի հայեցողությամբ կիրառվում է վարկի վաղաժամկետ մարման միջնորդավճար՝ վաղաժամկետ մարվող գումարի 5% չափով:

Տույժեր և տուգանքներ

Բանկի հայեցողությամբ կարող են կիրառվել հետևյալ տույժերն ու տուգանքները.

1. ժամկետանց վարկի և/կամ ժամկետանց տոկոսագումարի դեպքում ժամկետանց գումարի 0.13 տոկոսի չափով ուշացման յուրաքանչյուր օրվա համար:
2. վարկի տրամադրման համար սահմանված նախապայմանների յուրաքանչյուր խախտման դեպքում՝ վարկի գործող տոկոսադրույքի բարձրացում մինչև 4 տոկոսային կետով:
3. գրավադրվող գույքի ապահովագրության պահանջի դեպքում ապահովագրական պոլիսի (վկայագրի) օրինակը Բանկին սահմանված ժամկետում տրամադրելու պարտավորությունը չիրականացնելու դեպքում՝ վարկի գործող տոկոսադրույքի բարձրացում մինչև 4 տոկոսային կետով:

Հաճախորդի կողմից վարկի մարման ուշացումների կամ այլ պայմանագրային պարտավորությունների չկատարման համար Բանկի կողմից կարող են առանձին կոնկրետ վարկերի համար սահմանվել այլ տուժանքներ և անբարենպաստ հետևանքներ՝ ներառյալ գործող տոկոսադրույքի փոփոխություն:

Տուժանքի մասին դրույթները և չափերը սահմանվում են Հաճախորդի հետ կնքվող պայմանագրերով/համաձայնագրերով:

Ուշադրություն

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստր և «ԱՔՌԱ Քրեդիտ Րեփորթինգ» ՓԲԸ-ին: Վատ վարկային պատմություն ունենալը հետագայում կարող է խոչընդոտել օգտվել Բանկի կողմից տրամադրվող ֆինանսական գործիքներից:

Վարկային պարտավորությունները պայմանագրով սահմանված կարգով չկատարելու դեպքում Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու բռնագանձել և իրացնել գրավադրված գույքը և գրավի առարկայի իրացումից ստացված միջոցների հաշվին մարել Հաճախորդի վարկային պարտավորությունները:

Հաճախորդի վարկային պարտավորությունները մարելու համար գրավի իրացումից ստացված գումարը բավարար չլինելու դեպքում պարտավորությունները կարող են մարվել Հաճախորդի և/կամ երաշխավորի այլ գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Եթե հայցվող վարկային միջոցները տրամադրվելու են նաև կամ բացառապես Ձեր՝ այլ կազմակերպություններում (բանկեր, վարկային կազմակերպություններ և այլն) գտնվող վարկային պարտավորությունների վերաֆինանսավորման նպատակով, ապա սույնով զգուշացնում ենք, որ Դուք պարտավոր եք մարել վերաֆինանսավորումից հետո այդ կազմակերպություններում չմարված տոկոսագումարները, տուժանքը, սպասարկման և այլ վճարները ինքնուրույն, որոնց չկատարման դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում:

Վարկերի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Նախնական փաստաթղթերի ցանկը ներառում է.

- ԱՔՌԱ-ի Դիմում-հայտ
- Իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրության պատճեն, իսկ անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաստաթուղթ
- Պետական ռեգիստրի կողմից տրված պետական գրանցման վկայականի պատճեն
- ՀՎՀՀ (հարկային կող):

Վարկի տրամադրման որոշման կայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառում է.

- Ֆինանսավորման ստացման հայտ
- Վարձակալության պայմանագիր (պատճեն)
- Որպես գրավ առաջարկվող միջոցների (անշարժ գույք, հիմնական միջոցներ, շարժական գույք, ապրանքանյութական արժեքներ և այլն) սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր
- Առաջարկվող գրավի գնահատման (վերագնահատման) նախնական ակտ կամ արժեքի որոշման հիմք
- Հիմնադիրների, տնօրենի և գլխավոր հաշվապահի անձնագրեր (անձը հաստատող փաստաթղթեր) և հանրային ծառայությունների համարանիշեր կամ վերջիններս չստանալու վերաբերյալ տեղեկանք
- Ֆիզիկական անձ գրավատուների, երաշխավորների դեպքում՝ վերջիններիս անձնագրերի կամ անձը հաստատող փաստաթղթերի պատճեններ, երաշխավորների համաձայնությունը վարկային պատմության վերաբերյալ հարցումներ կատարելու համար
- Տեղեկանք հարկային տեսչությունից՝ պարտավորությունների վերաբերյալ
- Մասնագետի պահանջով այլ փաստաթղթեր:

Պրոդուկտի Տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառում է.

- Ընդհանուր ժողովի կամ միակ մասնակցի որոշման արձանագրության քաղվածք՝ ֆինանսավորում ստանալու և գրավադրվող գույքի վերաբերյալ
- Որպես գրավ առաջարկվող միջոցների սեփականության հիմք, եթե նախորդ փուլում չի տրամադրվել
- Գրավի ապահովագրության վերաբերյալ փաստաթղթեր, ապահովագրավճարի անդորրագրեր (ապահովագրության պահանջի դեպքում)
- Կադաստրի տարածքային ստորաբաժանումների կողմից տրված միասնական տեղեկանք՝ գրավադրվող գույքի վերաբերյալ
- Տեղեկանք ՊԱՏ-ից գրավադրվող մեքենայի արգելանքի կամ դրա բացակայության վերաբերյալ
- Գործունեության ծավալման վայրի սեփականության կամ վարձակալության վկայականի պատճեն, կամ էլ վարձակալության պայմանագրի պատճեն, կամ հաճախորդի գործունեության վայրի նկատմամբ իրավունքներ հաստատող այլ հիմք՝ տեղեկանք և այլն, ֆիզիկական անձի դեպքում՝ տեղեկանք (օրինակ՝ գյուղապետարանից) գործունեության վայրի վերաբերյալ
- Բանկի պահանջով՝ գրավադրվող գույքի ձեռքբերման հիմնավորող փաստաթղթերի պատճեններ
- Գյուղատնտեսական վարկերի դեպքում՝ Գյուղապետարանից տեղեկանք:
- Համատիրությունից տեղեկանք՝ ձև 2
- Բաց բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ բաժնետերերի մասին ռեեստրի տեղեկանք:

Առաջնակարգ ապահովված վարկերի դեպքում իրավական փաստաթղթերի ցանկ

Իրավաբանական անձ հաճախորդը Բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը

- Տնօրենի անձնագիր(անձը հաստատող փաստաթուղթ) և ՀԾՀ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք
- Պետ.ռեգիստրի վկայական
- ՀՎՀՀ
- Կանոնադրություն
- Մասնակիցների անձնագրեր կամ հիմնադիր փաստաթղթեր

- Բաժնետիրական ընկերությունների դեպքում տեղեկանք դեպոզիտարիայից
- Ա/Կ-ի դեպքում տեղեկանք անդամների մասին պետ.ռեգիստրից
- Կախված այլ իրավական կարգավիճակից համապատասխան տեղեկանքներ
- Մասնակց/ների/ որոշում վարկ վերցնելու և գրավ առաջարկելու վերաբերյալ

Անհատ ձեռնարկատեր հաճախորդների դեպքում

- ԱՁ անձնագիր (անձը հաստատող փաստաթուղթ) և ՀԾՀ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք
- Պետ.ռեգիստրի վկայական
- ՀՎՀՀ

Ֆիզիկական անձ այլ հաճախորդների դեպքում

- ԱՁ անձնագիր (անձը հաստատող փաստաթուղթ) և ՀԾՀ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք
- Արտոնագիր (արտոնագրային վճար վճարող հաճախորդների դեպքում)
- ՀՎՀՀ

Վարկը տրամադրելու դրական որոշման և մերժման գործոնները

Բանկը հակված է տրամադրել վարկը, եթե՝

- Հայտատուն համապատասխանում է տվյալ վարկի տրամադրման պայմաններին և սահմանափակող դրույթներին,
- Հայտատուն Բանկի պահանջով իր վարկային պարտավորությունը ապահովում է գրավով, երաշխավորությամբ կամ այլ կերպ,
- Հայտատուն գնահատման արդյունքում ճանաչվում է վարկունակ,
- Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը արժանահավատ են և ներառում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները,
- Հայտատուի վարկային պատմությունը դրական է կամ բացակայում է:

Հայտատուի՝ վերոնշյալ պայմաններից ցանկացածին, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ պահանջներին չհամապատասխանելը կարող է հանգեցնել վարկի տրամադրման մերժմանը:

Կապ Բանկի հետ

Մանրամասների և հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
- Viber: +374 95 511211
- Skype: conversebank-callcenter